Ուրբաթ, 19 նոյեմբերի, 2010թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը։

Հանձնաժողովը քննարկել է 8 բարեգործական ծրագիր։ Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստանե համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի դիտավան գյուղում երկու ջերմոցի կառուցումե, «Բժշկական կենտրոնե ՓԲԸ-ի տարածքի բարեկարգումե և «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 (202) գիշերօդիկ մսուր-մանկապարտեզի հիմնանորոգումե ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարանե ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Էլեկտրոնային բժշկական գրադարանե ծրագիրը, որի նպատակն է նպաստել ՀՀ-ում բժշկական ծառայություններիորակի բարձրացմանը՝ ՀՀ բժիշկների և բուժաշխատողների համար շարունակական կրթության առկա մեխանիզմներից մեկի արդիականացման միջոցով.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, կովկասի պահպանող տարածքների հիմնադրամի և «Անտառային գիտափորձարարական կենտրոնե ՊՈԱԿ-ի միջև 30.07.2010 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2010 թվականիե ծրագիրը.

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլե միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանավան թաղամասի մանկապարտեզի և համայնքային կենտրոնի վերանորոգումե ծրագիրը.

«ՎԵՄե բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՎԵՄե ԲՀԿ-ի ստուդիաների տեխնիկական վերազինում ծրագիրը, որի նպատակն է բարելավել «ՎԵՄե ռադիոկայանի կողմից պատրաստվող հոգևոր, պատմական, մշակութային բարցրարժեք հաղորդաշարերի, դասական երաժշտության հեռարձակման ծրագրերի որակը.

«Կամրջակե սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Արարատի մարզի Արևաբույր գյուղի խմելու ջրագծի կառուցումե ծրագիրը։

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: